

Армянский Колледж

Учитесь АРМЯНСКОМ ГОВОРИТЬ НА ЯЗЫКЕ

+7 904 506 91 28

Օրերի հետ

Երկու անգամ մահից ազատվեցի

Դեպքը պատահել է Շամխորում: Իմ հարևան թուրք ուսուցիչ Մադլենը մեր ընտանիքը մահից փրկեց երկու անգամ: Հայ-ադրբեջանական պատերազմն արդեն սկսվում էր: Վտանգավոր էր դարձել Ադրբեջանում հայերի մնալը: Այդ օրը՝ գիշերը, երկրորդ փողոցում ապրող Սերգեյ Մինասյանի վրա հարձակվեց մի թուրք լակոտ: Սերգեյը ինքնապաշտպանության ժամանակ սպանել էր թուրքին: Ամբողջ քաղաքը իրար էր անցել: Լույսը դեռ չբացված, ոստիկանները եկան իմ տունը խուզարկելու: Սերգեյին էին մահ գալիս: Ավագ ոստիկանը ձանաչում էր ինձ, ասաց, որ տղաներ սխալ ենք անում, սա մեր Քեռին է (այդպես էր իմ մականունը):


Առավոտյան ժամը ութն էր, երբ դուռը բացեցի և, ի զարմանս ինձ, տեսա իմ բակում քսան մարդ է գինված կանգնած: Երաժշտական դպրոցի ուսուցչական կոլեկտիվն էր և իմ հիմնարկի տղամարդիկ էին, որտեղ ես 44 տարի աշխատել էմ: Նրանք ինձ ցույց տվեցին իրենց գեները և ասացին, որ չվախենանք, ոչ ոք ինձ և իմ ընտանիքին չի մոտենա: Դա շրջանի ուսուցիչի հրամանն էր, որ պաշտպանեին ընտանիքս:

Իմ լավ հարևանը՝ Մադլենն, ու իր ավագ որդին՝ Ռուշան, եկան մեր տուն և ինձ ու կնոջս տարան իրենց տուն: Ասացին, որ Հայաստանից եկած թուրքերը պիտի հարձակվեն մեր տան վրա, ապահովության համար պիտի իրենց տանը գիշերենք: Գիշերը ես ու կինս մնացինք այնտեղ, առավոտյան մեզ տարան ոստիկանություն և մյուս գիշեր տեղափոխեցին Հայաստան: Ահա այդպես փրկեցին մեր կյանքը:

Երկրորդ դեպքը պատահեց 1989 թ. դեկտեմբերի 10-ին: Հարևան հեռագիր տվեց, թե ամեն ինչ լուրջ է, եկեք, որ ձեր ունեցվածքը տանեք: Ես ու կինս մեկնեցինք Շամխոր՝ մեր ունեցվածքի հետևից: Ընկեր, հարևան, բոլորը հավաքվեցին, գրույցի բռնվեցին: Մեկ ժամ էլ չէր անցել, հանկարծ շրջանի դատախազի վարորդը եկավ ու ասաց, թե Քեռի Վահան դրսում մի կանգնեց, դրությունը շատ վատ է, գնացեք տուն: Կնոջս հետ եկանք մեր տուն, հանկարծ հեռախոսը գանգեց: Ծանոթ ձայն լսեցի լսափողի մեջ, հիվանդանոցի բուժքույր Դիլաշատն էր: Նա ասաց, որ շուտ հեռանանք տնից, մի թուրք են սպանել, դրա բարեկամներն էլ ասել են, որ մենք 10 հայ պիտի սպանենք դրա համար, և այդ ցուցակում առաջինը քո անունն է գրված: Կինս շաքարախտով հիվանդ էր, ես նրան այդ մասին ոչինչ չասացի: Խաբեցի, ասելով, թե ապահովության համար պիտի գնանք իր եղբոր աղջկա տանը գիշերենք: Առավոտյան հարևանս եկավ և մեզ ծածուկ ձա-նապարհներով փախցրեց-հասցրեց Կազախի ոստիկանության պոստը ու ոչ մի կոպեկ չվերցրեց, փոխարենն ասաց, թե ես քեզ թուրքից ազատեցի, որ ինձ փող տաս: Հետո տունս, ունեցվածքս վաճառեցի հենց այդ հարևաններիս՝ փոխարենը վերցնելով մի չնչին գումար:

Վահան Մանվելյան

АРМЯНСКИЙ ЯЗЫК ДЛЯ САМЫХ МАЛЕНЬКИХ



Խ Խ ՆՆՁԻ ՀԵՏ

Խխնուջի հետ զգույշ վարվիր, Նրա կողքով զգույշ քայլիր, Մի ցատկոտիր, Մի աղմկիր, Մի խախտիր հանգիստը խաղաղ, Որ նա կասկածները վանի, Պոզիկները մի կողմ տանի Ու կամենա քեզ հետ խաղալ:



Ծ Ծ ԾԻԾԵՌԱԿՆԵՐԸ

Ծիծեռնակի ծ-ն անսպառ, Ծ-ն անսպառ մի տառ է: Ծ-ով կարող է տազնապել, Ուրախանալ, ծիծաղել: Ծառի վրա, ծովի վրա, Կապույտների մեջ անծիր՝ Իրենց ծ-երն են շաղ տալիս Ծիծեռնակները անթիվ:



Կ Կ ԿՈ-ԿՈ, ԿՈՐՈ


- Կո-կո, կորո... Կո-կո, կորո... Կո-կո, կորո-կո... Այս երգն է հնչում բակի մեջ՝ Օրը ցերեկով: Ածան հավիկի երգն է դա՝ Հղված աշխարհին, Որ աշխարհը մեր հոգաշատ Ձուն իր նշմարի:



Рубрику ведет преподаватель армянского языка Арmine Варданян


Նյութը վերցված է Յուրի Սահակյանի «Այբբենարանի ուղեկից» գրքից Տպագրության պատրաստեց Արմինե Վարդանյանը

КРОССВОРДЫ ОТ ШОГИК СИМАОНЯН




Кроссворд № 13

По вертикали:
1. Игрушка. 3. Молоко.
4. Свинья
По горизонтали:
2. Руль. 5. Инжир.



Кроссворд № 14

По направлениям стрелок:
1. Смяться. 2. Острая боль.
3. Клоун.
По вертикали: 4. Коза.
По горизонтали: 2. Горький.



Кроссворд № 15

По вертикали:
1. Зелёный. 2. Красный
По горизонтали:
3. Сухой фрукт.



Рубрику ведет преподаватель армянского языка Шогик Симавонян

Սիրված հարսներ

Բաբաջանյանի հարսնացուն հյուսիսի՛ց, թ՛ե հարավից



«Հարսնացուն հյուսիսից» ֆիլմում Արտակի կերպարը մարմնավորած Արա Բաբաջանյանը իրական կյանքում վարվեց ճիշտ հակառակը և իր համար հարսնացու ընտրեց հարավից՝ հարևան Վրաստանից: Իսկ թե ինչպե՛ս և որտե՛ղ Արա Բաբաջանյանը ծանոթացավ վրաց գեղեցկուհու հետ, պատմում է հենց հարսիկը՝ Մայա Կրիստինյանը:

- Թիֆլիսում ավելի քան 27 տարի աշխատել եմ հեռուստատեսությունում: Սկսեցի 18 տարեկանից ռեժիսորի ասիստենտի և վերջացրեցի հեռուստա-ընկերության երաժշտական պրոդյուսերի աշխատանքով: Գուցե շատերը կհիշեն, որ «Դուետ Ջորջիա»-յի պրոդյուսերը ես էի, ովքեր մի քանի տարի առաջ հաղթեցին Յուրմալայում: Այնտեղ մենք ներկայացրեցինք Արա Բաբաջանյանի «Նուկ-տյուրն» ստեղծագործությունը: Իսկ 2008 թվականի նոյեմբերին Երևանում եղան օրեր նվիրված Արա Բաբաջանյանին: Այդ ժամանակ մեզ գանգահարեցին և ասացին, որ Արաի Բաբաջանյանը խնդրում է գալ Հայաստան, ներկա լինել Արա Բաբաջանյանին նվիրված հա-մերգին և երգել: Մենք խմբով եկանք Երևան և Արաի Բաբաջանյանը մեզ դիմավորեց: Այդպես ծանոթացանք և այդտեղից սկիզբ դրվեց մեծ սիրո...»

- Ի՞նչ հետաքրքիր հուշեր ունեք կապված Ձեր աշխարհահռչակ սկեսրայի՞ր Արա Բաբաջանյանի հետ:

- Ցավով, նա 1983 թ. է մահացել, իսկ ես Արաիկի հետ ծանոթացել եմ շատ ավելի ուշ: Երբ մենք հանդիպեցինք և որոշեցինք ամուսնանալ, Արաիկի մտերիմներն ու բարեկամներն ասում էին, որ մենք ծանոթացել ենք Արա Բաբաջանյանի և Նրա երգի շնորհիվ: Իրոք, մեզ ծանոթացրեց «Նուկտյուրն»-ը, և ես այդ երգի շնորհիվ գտա իմ ողջ կյանքի սիրուն: Արաիկն էլ է այդպես կարծում, ասում է Արաի օգնեց ինձ մի անգամ էլ գտնել իմ երկրորդ կեսին: Դե գիտեք, որ Արաիկը ամուսնացած է եղել, իսկ, երբ մենք հանդիպեցինք, ես տարիքով արդեն փոքր չէի, իսկ Արաիկը 57 տարեկան էր: Իհարկե, շատ-շատ եմ սիրում Արա Բաբաջանյանի բոլոր երգերը, բայց ոչ մի երգ չի կարող մրցել «Նուկտյուրն»-ի հետ:

- Կպատմե՞ք ձեր յուրօրինակ հարսանիքի մասին:

- Չգիտեմ, թե որքանով է մեր հարսանիքը յուրօրինակ եղել, երևի նրանով էր առանձնանում, որ այդ տարիքում մեծ հարսանիքներ չեն անում: Մեր հարսանիքն արեցինք Թիֆլիսում, ավելի ճիշտ՝ Վրաստանի հին, փոքրիկ քաղաքներից մեկում, որն առաջ եղել է Վրաստանի հիվանդուց մայրաքաղաքը՝ Ցխեթան: Մենք ընտրեցինք շատ լավ վայր, հոյակապ ռեստորան և մեր հարսանիքին ներկա էին միայն շատ մտերիմ ընկերներ. եկել էին Ռուսաստանից, Լոնդոնից և, իհարկե, Երևանից: Ներկա էին նաև երգիչ-երգչուհիներ, պարային խմբեր. շատ լավ ժամանակ անցկացրեցինք:

- Ինչպիսի՞ն է այսօր Բաբաջանյանների հայտնի ընտանիքը:

- Բաբաջանյանների ընտանիքն այսօր համեստ ու հասարակ կովկասյան ընտանիք է, որտեղ ամուսինն աշխատում է, իսկ կինը հոգ է տանում ամուսնու մասին: Մեր ընտանիքում Արաիկի և Նան իմ կյանքի կարևորագույն նպատակն է պահել Արա Բաբաջանյանի վառ հիշատակը: Եվ, իհարկե, տարածել նրա երաժշտությունը երիտասարդության մեջ ու ոչ միայն հայ, այլ նաև ռուս և վրաց: Հիմա՝ ամուսնությունից հետո, օգնում եմ Արաիկին կազմակերպել մրցույթներ կամ համերգներ, հորեյանական միջոցառումներ՝ նվիրված Արա Բաբաջանյանին:

- Արդյոք Հայաստանում եղած ժամանակ ձեզ օտար էք զգում:

- Երբեք, հենց Երևանում իջնում եմ ինք-նաթոից, կարծես իմ հայրենիքում լինեմ: Այնպես չէ, որ իմ հայրենիքն ավելի մոտ է Երևանին դրա համար եմ ինձ լավ զգում, բացարձակ դրա հետ չէ կապված: Ուղղակի Երևանում առանձնահատուկ ջերմություն եմ զգում: Ունեմ շատ լավ ընկերուհիներ: Իհարկե, բոլորի հետ Արաիկն է ծանոթացրել, հատկապես ուզում եմ նշել հայ մեծ կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանի դուստր Նարինե Հարու-թյունյանին, բարի և անկրկնելի երգչուհի Գայանե Հովհաննիսյանին, Արմինե Դարբինյանին, որոնց հետ մեծ սիրով ընկերություն եմ անում:

- Երբևէ ձեր ընտանիքին խանգարե՞լ է հայ և վրաց սովորույթների տարբերությունները:

- Հակառակը, այդ սովորույթներն այնքան նման են իրար: Կյանքում չէի մտածում, որ կունենամ օտարազգի ամուսին: Ես երբեք չեմ զգացել, որ ես օտարազգի է՝ օտար ավանդույթներով ու սովորույթներով: Ընդհան-րապես մեր երկու ժողովուրդների ամեն ինչը նույնն է թե՛ մտածելակերպը, թե՛ սովորույթները: Մեր ըն-տանիքում նման խնդիրներ չեն ծագում:

- Իսկ ամեն դեպքում հայկական ավանդույթների մեջ ի՞նչը կփոխեցի:

- Ընդհանրապես կողմնակից չեմ ավանդույթներ փոխելուն՝ ավանդույթ մնում է ավանդույթ: Նույնիսկ ինձ շատ է դուր գալիս, որ հայերն ավելի ամուր են կապում իրենց ավանդույթներին, քան վրացիները:

- Ի՞նչն էք ամենից շատ գնահատում տղա-մարդկանց մեջ:

- Առաջին հերթին գնահատում եմ խելքն ու բարությունը: Սիրում եմ, որ տղամարդը հումորով է լինում: Շատ եմ սիրում նաև, երբ տղամարդը երգում է:

- Վերջում մեր սիրելի հարսին ի՞նչ կմաղթի հայուհիներին և ի՞նչ խորհուրդ կտա հայ տղա-մարդկանց:

- Հայուհիներին մաղթում եմ, որ միշտ սիրեն և սիրված լինեն: Իսկ տղամարդիկ թող սիրեն իրենց կանանց: Ամենակարևորը, ինձ դուր է գա-լիս հայ տղամարդու մեջ այն, որ նրանք սիրում են իրենց ընտանիքը: Նրանք անում են ամեն ինչ, որ ընտանիքը լինի ապահովված:

Չորրորդ՝ Հրատ Սարաֆյանը